Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
ապրիլի 19-ի N 544 - Ն որոշման

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

«ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ» N ՄԲԱՊՁԲ -08/41 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

քաղ. Երևան երկու հազար տասներկու թվականի _____ ____ին

Հիմք ընդունելով «Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերության միջև 2009 թվականի հուլիսի 23-ին կնքված «Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման» ՆՄԲԱՊՁԲ-08/41 պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) (վավերացված՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված սեղանամատյանում՝ 4663 համարով), 2010 թվականի հունվարի 14-ին կնքված՝ պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ «Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման» ՆՄԲԱՊՁԲ-08/41 պետական գնման պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագիրը (վավերացված՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված սեղանամատյանում՝ 95 համարով), 2010 թվականի մայիսի 12-ին կնքված՝ պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ «Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման» ՆՄԲԱՊՁԲ-08/41 պետական գնման պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագիրը (վավերացված՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված սեղանամատյանում՝ 3558 համարով), 2011 թվականի հունվարի 31-ին կնքված՝ պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ «Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման» ՆՄԲԱՊՁԲ-08/41 պետական գնման

պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագիրը (վավերացված՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված սեղանամատյանում՝ 637 համարով) և 2011 թվականի հունիսի 16-ին կնքված՝ պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ «Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման» ՈՄԲԱՊՁԲ-08/41 պետական գնման պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագիրը (վավերացված՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված սեղանամատյանում՝ 5143 համարով), կողմերը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ հիմնարկ), որը գործում է կանոնադրության հիման վրա, ի դեմս ---------- ի (այսուհետ՝ գնորդ), մի կողմից, և «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս ----------ի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և հիմնարկի միջև ---------- թ. կնքված համաձայնագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի 4.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Պայմանագրի գինը կազմված է հետևյալ տարրերից՝

ա. շինարարության արժեք. գույքի մակերեսն ընդհանուր կազմում է 198.358 քառ. մետր, որի արժեքի հաշվարկն իրականացվում է մեկ քառակուսի մետրի համար՝ 167400 դրամով, Սպիտակ քաղաքում կառուցման ենթակա բնակելի տների համար՝ 178040 դրամով, իսկ Ախուրյան գյուղում, Սպիտակ, Վանաձոր և Գյումրի քաղաքներում բազմաբնակարան շենքերի համար՝ 182100 դրամով, որի արդյունքում շինարարության ընդհանուր արժեքը կազմում է 33.772.226.360 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը: Շինարարության արժեքը ներառում է հարկերը, տուրքերը, գույքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումը, փորձաքննության անցկացման, հեղինակային և տեխնիկական հսկողության, կառուցման կամ վերակառուցման, ինժեներական ենթակառուցվածքների, բարեկարգման և արտաքին լուսավորության իրականացման հետ կապված ծախսերը, շահույթը:

Նշված գույքի մակերեսը և բնակարանների և (կամ) բնակելի տների թիվը վաճառողի կողմից ներկայացված է նախնական հաշվարկի հիման վրա և ենթակա է փոփոխության նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ գնորդի հետ համաձայնեցման փուլում, որի արդյունքում պայմանագրի ընդհանուր գինը ենթակա է փոփոխման՝ հիմք ընդունելով շինարարության 1 քառ. մետրի արժեքը՝ 167400 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), Սպիտակ քաղաքում կառուցման ենթակա բնակելի տների համար՝ 178040 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), իսկ Ախուրյան գյուղում, Սպիտակ, Վանաձոր և Գյումրի քաղաքներում բազմաբնակարան շենքերի համար՝ 182100 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը).

բ. վաճառվող գույքի հետ կապված հողամասերի, կիսակառույց (անավարտ) և օժանդակ շինությունների գինը, պայմանագրի 3.2.5-րդ կետով սահմանված գնով, գումարած ավելացված արժեքի հարկը»:

2. Պայմանագրի 7.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.1. Հիմնական պայմանագրի նոտարական վավերացմամբ կնքման ժամկետը սահմանվում է սույն պայմանագրի շրջանակներում հանձնվող՝

ա) բնակելի տներից՝

4-սենյականոցների համար՝ սույն պայմանագրի 3.2.5-րդ կետով սահմանված պարտավորության համապատասխան մասը կատարելուց (կառուցապատման համար անհրաժեշտ հողատարածքը տրամադրելուց՝ հողատարածքի նկատմամբ վաճառողի սեփականության իրավունքը գրանցելուց) հետո՝ 300 օր,

1, 2, 3, 5 և 6-սենյականոցների համար՝ սույն պայմանագրի 3.2.5-րդ կետով սահմանված պարտավորության համապատասխան մասը կատարելուց (կառուցապատման համար անհրաժեշտ հողատարածքը տրամադրելուց՝ հողատարածքի նկատմամբ վաճառողի սեփականության իրավունքը գրանցելուց) հետո 270 օր,

բ) բազմաբնակարան շենքերի համար՝ սույն պայմանագրի 3.2.5-րդ կետով սահմանված պարտավորության համապատասխան մասը կատարելուց և սույն համաձայնագրի նոտարական վավերացումից հետո՝ ոչ ուշ, քան 2013 թվականի դեկտեմբերի 20-ը:

Ընդ որում, վաճառողի կողմից պայմանագրի 3.2.1-ին կետով սահմանված կարգով գույքի առանձին միավորների շինարարության ավարտի մասին գնորդին ծանուցումն ուղարկելու պահից սույն կետով սահմանված ժամկետները համարվում են կասեցված:

Հիմնական պայմանագրի կնքումից ծագող՝ գնորդի իրավունքների պետական գրանցումը կատարվում է գնորդի կողմից և գնորդի հաշվին»:

3. Պայմանագրի N 1 հավելվածի 5-րդ կետին նախորդող «Ախուրյան գյուղում կառուցվող բնակարանների համար՝ ստորև նշված 5-րդ կետով ներկայացված աշխատանքները» նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ախուրյան գյուղում, Սպիտակ, Վանաձոր և Գյումրի քաղաքներում կառուցվող բնակարանների համար՝ ստորև նշված 5-րդ կետով ներկայացված աշխատանքները»:

4. Պայմանագրի N 2 հավելվածի 1-ին տողը փոխարինել սույն համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածով ներկայացված 1-ին տողով:

5. Պայմանագրի N 2 հավելվածի 13-րդ տողից հետո ավելացնել սույն համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածով ներկայացված 14-րդ տողը, և պայմանագրի N 2 հավելվածի վերջին երկու պարբերությունները շարադրել սույն համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածով ներկայացված խմբագրությամբ:

6. Պայմանագրի N 4 հավելվածի նախավերջին տողում «26.745.171.080» թիվը փոխարինել «19.682.546.360» թվով:

7. Սույն համաձայնագրի 2-րդ կետով կատարված փոփոխությունը տարածվում է նաև պայմանագրի կնքման պահից կողմերի միջև ձևավորված հարաբերությունների վրա և պայմանագրի՝ նշված կետով սահմանված դրույթները կիրառելիս կողմերը ղեկավարվում են սույն համաձայնագրի դրույթներով:

8. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և նոտարական վավերացման պահից:

9. Սույն համաձայնագիրը կնքված է հայերենով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և կողմերի միջև կնքված պայմանագրի անբաժանելի մասն է: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Վաճառող	Գնորդ
«Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերություն	Հայաստանի Հանրապետության անունից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Քաղ. Երևան, Սայաթ-Նովայի 19	Քաղ. Երևան, Կառավարական տուն, 3
ՀՎՀՀ՝	ՀՎՀՀ՝

2012 թվականի _____ին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ _____ նոտարական տարածքի նոտար _____ի կողմից: Համաձայնագիրն ստորագրվել է իմ ներկայությամբ: Համաձայնագիրն ստորագրողների ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև ներկայացուցչի (ներկայացուցիչների) լիազորություններն ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում՝ _____ ով:
Գանձված է պետական տուրք և ծառայության
վճար՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և
«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների
Նոտար _____

Հավելված N 1

«

NN ը/կ	Գնման առարկան	Քանակը (քառ.մետր)
1.	ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան գյուղում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանների (անհատական, բլոկացված և բազմա-բնակարան բնակելի տներով կառուցապատմամբ) և սպասարկման օբյեկտների ձեռքբերում	19124
14.	Վանաձոր և Գյումրի քաղաքներում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար 32 բնակարանների և (կամ) սպասարկման օբյեկտների ձեռքբերում	2770

«Պայմանագրի շրջանակներում գնորդն իրավունք ունի վաճառողին պատվիրելու պայմանագրի N 2 հավելվածի սյունակներում չներառված՝ ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի այլ համայնքներում և ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում երկրաշարժի հետևան-քով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանների և (կամ) բնակելի տների և (կամ) սպասարկման օբյեկտների ձեռքբերում:

Գույքի մակերեսն ընդհանուր կազմում է 198.358 քառ. մետր, որի արժեքի հաշվարկն իրականացվում է մեկ քառակուսի մետրի համար՝ 167400 դրամով (ներառյալ ավելացված արժեքի հարկը), Սպիտակ քաղաքում կառուցման ենթակա բնակելի տների համար՝ 178040 դրամով (ներառյալ ավելացված արժեքի հարկը), իսկ Ախուրյան գյուղում, Սպիտակ, Վանաձոր և Գյումրի քաղաքներում բազմաբնակարան շենքերի համար՝ 182100 դրամով (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

Սույն պայմանագրով սահմանված գույքի շինարարության մակերեսի ընդհանուր չափը 33.612 քառ. մետրով պակաս է սույն հավելվածի սյունակներում ներկայացված ընդհանուր քառ. մետրից: Նշված չափին համապատասխան (33.612 քառ. մետր) սույն հավելվածի սյունակներում ներկայացված քանակների նվազեցման համամասնությունը՝ ըստ ներկայացված համայնքների, որոշում է գնորդը»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
ապրիլի 19-ի N 544 - Ն որոշման

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

«ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ» N ԱՊՁԲ -08/132 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան երկու հազար տասներկու թվականի _____ ____ին

Հիմք ընդունելով «Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերության միջև 2008 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված՝ «Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման» ՆԱՊՁԲ-08/132 պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) (վավերացված՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված սեղանամատյանում՝ 10808 համարով), 2010 թվականի հունվարի 14-ին կնքված՝ պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ «Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման» ՆԱՊՁԲ-08/132 պետական գնման պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագիրը (վավերացված՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված սեղանամատյանում՝ 96 համարով), 2010 թվականի մայիսի 12-ին կնքված՝ պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ «Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման» ՆԱՊՁԲ-08/132 պետական գնման պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագիրը (վավերացված՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված սեղանամատյանում՝ 3561 համարով) և 2011 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված՝ պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ «Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման» ՆԱՊՁԲ-08/132 պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» համաձայնագիրը (վավերացված՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի

կողմից, գրանցված սեղանամատյանում՝ 10455 համարով), կողմերը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ հիմնարկ), որը գործում է կանոնադրության հիման վրա, ի դեմս ----------ի (այսուհետ՝ գնորդ), մի կողմից, և «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս ----------ի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և հիմնարկի միջև ----------թ. կնքված համաձայնագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի 1.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր), սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում գնորդին կամ գնորդի կողմից որոշված ստացողին (ստացողը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմին է) վաճառել պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող NN 1 և 2 հավելվածներում ներկայացված պահանջներին համապատասխանող բնակարաններ, հասարակական տարածքներ (նկուղ և (կամ) կիսանկուղ) և ընդհանուր օգտագործման տարածքներ՝ ներառյալ դրանց զբաղեցրած և սպասարկման համար հատկացված հողատարածքները (այսուհետ՝ բոլորը միասին՝ գույք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ գույքը և վճարել դրա դիմաց»:

2. Պայմանագրի 4.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Պայմանագրի գինը կազմված է հետևյալ տարրերից՝

ա. շինարարության արժեք. մեկ քառակուսի մետրի արժեքը կազմում է 182.118 դրամ, ընդ որում, գույքի մակերեսն ընդհանուր կազմում է 185.671 քառ. մետր, որից հասարակական տարածքների (նկուղ և (կամ) կիսանկուղ) արժեքի հաշվարկն իրականացվում է կողմերի միջև համաձայնեցված գործակիցների համաձայն, արդյունքում շինարարության արժեքը կազմում է 31.470.072.353 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը: Շինարարության արժեքը ներառում է հարկերը, տուրքերը, գույքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումը, փորձաքննության անցկացման, հեղինակային և տեխնիկական հսկողության, կառուցման կամ վերակառուցման, ինժեներական ենթակառուցվածքների, բարեկարգ-

ման և արտաքին լուսավորության իրականացման հետ կապված ծախսերը, շահույթը և որպես կանխավճար ստացած մուրհակների օտարումից մինչև 20.11.2009 թ. հաշվարկված զեղչերը: Գույքի հանձնման ժամանակ 1 քառ. մետրի արժեքում պետք է ներառվի նաև 20.11.2009 թ.-ից հետո մինչև մուրհակների մարման օրը մուրհակների օտարումից հաշվարկված զեղչերը:

Նշված գույքի մակերեսը վաճառողի կողմից ներկայացված է նախնական հաշվարկի հիման վրա և ենթակա է փոփոխության նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ գնորդի հետ համաձայնեցման փուլում, որի արդյունքում պայմանագրի ընդհանուր գինը ենթակա է փոփոխման՝ հիմք ընդունելով գույքի 1 քառ. մետրի գինը՝ 182.118 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, իսկ հասարակական տարածքների (նկուղ և (կամ) կիսանկուղ) արժեքի հաշվարկն իրականացվում է կողմերի միջև համաձայնեցված գործակիցների համաձայն,

բ. վաճառվող գույքի հետ կապված հողամասերի գինը, վաճառողի կողմից ձեռք բերած գնով, գումարած ավելացված արժեքի հարկը»:

3. Պայմանագրի 7.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.1. Հիմնական պայմանագրի նոտարական վավերացմամբ կնքման ժամկետը սահմանվում է սույն համաձայնագրի կնքման պահին կառուցվող գույքի համար՝ ոչ ուշ, քան 2012 թվականի սեպտեմբերի 1-ը, իսկ նոր կառուցման ենթակա գույքի համար՝ սույն համաձայնագրի նոտարական վավերացումից հետո՝ ոչ ուշ, քան 2013 թվականի դեկտեմբերի 20-ը: Հիմնական պայմանագրի կնքումից ծագող՝ գնորդի իրավունքների պետական գրանցումը կատարվում է գնորդի կողմից և գնորդի հաշվին»:

4. Պայմանագրի N 2 հավելվածը փոխարինել սույն համաձայնագրին կից ներկայացված N 1 հավելվածով:

5. Պայմանագրի N 4 հավելվածում կանխավճարների տրամադրման ժամանակացույցը լրացնել սույն համաձայնագրին կից ներկայացված N 2 հավելվածով ներկայացված տողերով:

6. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և նոտարական վավերացման պահից:

7. Սույն համաձայնագիրը կնքված է հայերենով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և կողմերի միջև կնքված պայմանագրի անբաժանելի մասն է: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Վաճառող	Գնորդ
«Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերություն	Հայաստանի Հանրապետության անունից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Քաղ. Երևան, Սայաթ-Նովայի 19	Քաղ. Երևան, Կառավարական տուն, 3
ՀՎՀՀ՝	ՀՎՀՀ՝

2012 թվականի _____ին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ _____ նոտարական տարածքի նոտար _____ի կողմից:

Համաձայնագիրն ստորագրվել է իմ ներկայությամբ: Համաձայնագիրն ստորագրողների ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև ներկայացուցչի (ներկայացուցիչների) լիազորություններն ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում՝ _____ով:
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների
Նոտար _____

Հավելված N 1

Գ Ն Մ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

NN ը/կ	Գնման առարկան	Չափի միավորը	Միավորի գինը	Նախատեսվում է գնել 2012 թվականի սեպտեմբերի 1-ին Ընդամենը	
				քանակը քառ. մետր	գինը (դրամ)
	Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի Մարմաշենի 10-րդ փողոցին հարող տարածքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար կառուցման ենթակա գույք (ներառյալ բնակարաններ, հասարակական տարածքներ և ընդհանուր օգտագործման տարածքներ)	1 քառ. մ	182.118, իսկ հասարակական տարածքների (նկուղ և (կամ) կիսանկուղ) արժեքի հաշվարկն իրականացվում է կողմերի միջև համաձայնեցված գործակիցների համաձայն՝ գումարած հողամասի արժեքը	185.671	31.470.072.353՝ գումարած հողամասի արժեքը

Հավելված N 2

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Սույն վճարման պարտավորությունը գնորդի մոտ առաջանում է համապատասխան ֆինանսական միջոցները նախատեսվելուց հետո:	9.914.039.519	վաճառողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով
Սույն վճարման պարտավորությունը գնորդի մոտ առաջանում է համապատասխան ֆինանսական միջոցները նախատեսվելուց հետո:	կառուցապատման համար անհրաժեշտ հողամասի գինը՝ գումարած ավելացված արժեքի հարկը	վաճառողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2012 թվականի
ապրիլի 19-ի N 544 - Ն որոշման

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

«ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ» N ԱՊՁԲ-08/133 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

քաղ. Երևան երկու հազար տասներկու թվականի _____ ____ին

Հիմք ընդունելով «Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերության միջև 2008 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված՝ «Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման» N ԱՊՁԲ-08/133 պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) (վավերացված՝ ՀՀ Կենտրոն նոտաական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված սեղանամատանում՝ 10807 համարով), 2010 թվականի մայիսի 12-ին կնքված՝ պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ «Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման» N ԱՊՁԲ-08/133 պետական գնման պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագիրը (վավերացված՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված սեղանամատյանում՝ 3560 համարով) և 2011 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված՝ պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ «Պետության կարիքների համար բնակարանների և սպասարկման օբյեկտների ձեռքբերման» N ԱՊՁԲ-08/133 պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» համաձայնագիրը (վավերացված՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից, գրանցված սեղանամատյանում՝ 10456 համարով), կողմերը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ հիմնարկ), որը գործում է կանոնադրության հիման վրա, ի դեմս----------ի

(այսուհետ՝ գնորդ), մի կողմից, և «Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս ----------ի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և հիմնարկի միջև ---------- թ. կնքված համաձայնագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի 1.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր), սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում գնորդին կամ գնորդի կողմից որոշված ստացողին (ստացողը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմին է) վաճառել պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ NN 1 և 2 հավելվածներում ներկայացված պահանջ-ներին համապատասխանող բնակարաններ, հասարակական տարածքներ (նկուղ և (կամ) կիսանկուղ), սպասարկման և ընդհանուր օգտագործման տարածքներ՝ ներառյալ դրանց զբաղեցրած և սպասարկման համար հատկացված հողատարածքները (այսուհետ՝ բոլորը միասին՝ գույք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ գույքը և վճարել դրա դիմաց»:

2. Պայմանագրի 4.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Պայմանագրի գինը կազմված է հետևյալ տարրերից՝

ա. շինարարության արժեք. մեկ քառ. մետրի արժեքը կազմում է 182.118 դրամ, ընդ որում, գույքի մակերեսն ընդհանուր կազմում է 19.000 քառ. մետր, որի արդյունքում շինարարության արժեքը կազմում է 3.460.242.000 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը: Շինարարության արժեքը ներառում է հարկերը, տուրքերը, գույքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումը, փորձաքննության անցկացման, հեղինակային և տեխնիկական հսկողության, կառուցման կամ վերակառուցման, ինժեներական ենթակառուցվածքների, բարեկարգ-ման և արտաքին լուսավորության իրականացման հետ կապված ծախսերը, շահույթը և որպես կանխավճար ստացած մուրհակների օտարումից մինչև 20.11.2009 թ. հաշվարկ-ված զեղչերը: Գույքի հանձնման ժամանակ 1 քառ. մետրի արժեքում պետք է ներառվի նաև 20.11.2009 թ.-ից հետո մինչև մուրհակների մարման օրը մուրհակների օտարումից հաշվարկված զեղչերը:

Նշված գույքի մակերեսը վաճառողի կողմից ներկայացված է նախնական հաշվարկի հիման վրա և ենթակա է փոփոխության՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ գնորդի հետ համաձայնեցման փուլում, որի արդյունքում պայմանագրի ընդհանուր գինը

ենթակա է փոփոխման՝ հիմք ընդունելով գույքի մեկ քառ. մետրի գինը՝ 182.118 դրամ, ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. վաճառվող գույքի հետ կապված հողամասի գինը՝ պայմանագրի 3.2.5-րդ կետով սահմանված գնով, գումարած ավելացված արժեքի հարկը: Հիմք ընդունելով 2009 թվականի հունիսի 19-ին կնքված հողատարածքի առուվաճառքի պայմանագիրը՝ պայմանագրի 3.2.5-րդ կետով սահմանված կադաստրային արժեքը կազմում է՝ մեկ քառ. մետրը՝ 1242 դրամ, իսկ անհրաժեշտ հողատարածքը՝ 14.700 քառ. մետր, որի արդյունքում հողամասի գինը կազմում է 21.908.880 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը»:

3. Պայմանագրի 7.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.1 Հիմնական պայմանագրի նոտարական վավերացմամբ կնքման ժամկետը սահմանվում է ոչ ուշ՝ քան 2012 թվականի սեպտեմբերի 1-ը: Հիմնական պայմանագրի կնքումից ծագող՝ գնորդի իրավունքների պետական գրանցումը կատարվում է գնորդի կողմից և գնորդի հաշվին»:

4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և նոտարական վավերացման պահից:

5. Սույն համաձայնագիրը կնքված է հայերենով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և կողմերի միջև կնքված պայմանագրի անբաժանելի մասն է: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Վաճառող	Գնորդ
«Գլենդել Հիլզ» փակ բաժնետիրական ընկերություն	Հայաստանի Հանրապետության անունից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշի-նության նախարարության «Քաղաքաշինա-կան ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Քաղ. Երևան, Սայաթ-Նովայի 19	Քաղ. Երևան, Կառավարական տուն, 3
ՀՎՀՀ՝	ՀՎՀՀ՝

2012 թվականի _____ին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ _____ նոտարական տարածքի նոտար _____ի կողմից:

Համաձայնագիրն ստորագրվել է իմ ներկայությամբ: Համաձայնագիրն ստորագրողների ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև ներկայացուցչի (ներկայացուցիչների) լիազորություններն ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում՝_____ով:
Գանձված է պետական տուրք և ծառայության
վճար՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և
«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների
Նոտար _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ